հաստ, տեսնելու արժանի»։ Ճերմակով երակաւոր այս կարմիր միապաղաղ սիւնաբուները իւղով այնքան շփուած եւ յղկուած են որ մարդ հայելին նայածի պէս կրնայ իր դէմքը տեսնել ա-նոնց մէջ։ Պատերուն ստորին կողմերը ծածկուած են ճերմակ մարմարի տախտակներով, որ կը ցոլացնեն ինչ որ կը գտնուի և կ'անցնի եկեղեցիին մէջ։ Սրբավայրին խաչաձև յատակագիծը և երեք կողակներու մասնայատկութիւնը շատ ուղևորներ նո-թագրած են. տեղեկութիւններ տուած են նաև դասին, սիւնե-րուն և յատակի ու տանիքի մասին։ Տանիքը անփուտ փայտէ շինուած էր և կը տեսնուէր ներսէն, և ծածկուած էր կապա-ռով։ Եկեղեցիին կատարին վրայ երկաթէ ձողով մը հաստատ-ուած էր ոսկեզօծ պղնձէ աստղ մը ի յիշատակ Մոգերու առաջ-նորդող աստղին։

Ս. Ծննդեան եկեղեցիին ճոխ զարդարանքի նկարագրու-թիւնը աւելի շահագրգռակա՛ն է, վասն զի նոյն զարդարանք-ներու տակ կը շողային մեծ գաւիթին պատերը։ Ներկայիս գրեթէ անհետացած այս արուեստին նկարագրութիւնը իր յա-տուկ տեղը ունի մենագրութեան մը մէջ, որուն նպատակն է ո՛չ թէ միայն անցելոյն մէջ գտնել ի՛նչ որ այսօր կայ, այլ նաև ընթերցողին ներկայացնել այն վեհութիւնը զոր կը պարզէր Ս. Ծննդեան եկեղեցին իր փառքի հին օրերուն։ Եթէ եկեղեցւոյ զարդարանքին ու մոզայիքներուն նկարագրութիւնը աւելի հին եւ կամ միջին դարու ուղեւորներու յիշատակարանաց վրայ յենլով պիտի գրենք, շատ քիչ բանով մը միայն կարելի է գո-հանալ. վասն զի նոյն ծանօթագրութիւնները շատ կցկտուր են և շատ համառօտ, նոյն իսկ հակասական և անճիշդ. նոյն զար-դարանքներուն ամբողջական նկարագրութիւն մը ընելու հա-մար պէտք կ'ըլլայ իջնել մինչև 1626 թուականը, ուր Գուա-ըէզմիոս ֆրանչիսկեան մեծաւոր գիտնականը, իբր ականատես վկայ և տեսականագէտ, կրնայ տալ մեզ այն տեղեկութիւն-ները որոնք կարեւոր են մեզ, թէև անկատար ա՛յն մեծ ընդ-հատներուն (lacunes) համար, զոր կրծող ժամանակը և արշա-ւողները պատճառած են։ Գուարէզմիոսի տուած տեղեկութիւն-ներուն կցելով Մարքիզ Տը Վոկէի դասական դարձած մեկնու-թիւնները, պիտի կրնանք ակնարկ մը նետել Ս. Ծննդեան եկե-ղեցիին կեղրոնական գաւիթին և դասին այսօրուան ճերմկցած